

ՍԵՆՏԵՔԵՐԻՄ ՏԵՐ-ՀԱԿՈՒՅԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ

Քանասեր Սենտքերիմ Տեր-Հակոբյանը (1883—1938) 1921—1937 թթ. եղել է էջմիածնի մատենադարանի դիրեկտորը: Այդ տարիներին նա նամակագրական սերտ կապեր է ունեցել հայ մշակույթի բալամարիվ երախտավորների հետ: Հրապարակվող նամակները շոշափում են հայագիտական, բանասիրական և այլ բնույթի մի շարք ուշագրավ հարցեր, որոնք վկայում են Ս. Տեր-Հակոբյանի բալամարեղուն գործունեության լույս շրջանակների մասին:

Նամակների բնագրերը պահվում են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) Կաթողիկոսական դիվանում:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

1

9 հոկտեմբերի, 1923
Ի Ս. էջմիածին

էջմիածնի մատենադարանապետ
պ. ՍԵՆՏԵՔԵՐԻՄ ՏԵՐ-ՀԱԿՈՒՅԱՆԻՆ.

Մ. տաճարի խմբապետ պ. Սպիրիդոն Մելիքյանը մատենադարանից ստացել է տաճարի քառաձայն խմբի պատրաստության համար մի երգեհոն. այժմ պ. Մելիքյանը հեռանում է էջմիածնից, իսկ դաշնամուրը հարկավոր է տաճարի քառաձայն խմբի համար: Դաշնամուրը, որ պատկանում էր ս. էջմիածնի միաբան տ. Կոմիտաս վարդապետին¹, 1910 թ. Մայր Աթոռը գնել է նրանից՝ փճարելով ութ հարյուր ռուբլի, ուստի և դաշնամուրը Մ. տաճարի սեփականություն է և պիտի տեղափոխվի տաճար: Այս մասին Ձեզ հայտնում եմ ի գիտություն:

Ի. տ. դիվանապետի՝ Գյուլեմ Եպիսկոպոս

Բղթ. 239, վավ. 193^{VI}

2

11 հունվարի, 1924
Թիֆլիս

Շատ հարգելի բարեկամ
ընկ. Ս. ՏԵՐ-ՀԱԿՈՒՅԱՆ.

Ձեր նամակը, ընկ. Տարագրոսի¹ նամակի հետ ներփակ, ստացել եմ ահա մի քանի օր է: Դուք գրում եք, որ ռավելի քան երկու շաբաթ առաջ Թիֆլիս եկող մի ընկերոջ հետ» ուղարկել եք և մի ուրիշ նամակ. երևակայեցեք, որ այդ ընկերը անփույթ է գտնվել Ձեր այդ նամակն ինձ հասցնելու, ես չեմ ստացել: Բանն այն է, որ Ձեր երկրորդ նամակի ստանալու օրը մի զարմանալի զուգահեռությամբ մի նամակ էլ ստանում եմ Երևանից, ուր ինձ հրավիրում են հանձն առնել տեղի գեղարվեստական դպրոցի վարիչի պաշտոնը. ես վաղուց ցանկություն ունենալով Հայաստանում աշխատելու, այժմ երկրնորանքի մեջ եմ. Երևանի՞ պաշտոնը, թե էջմիածնի: Ես կգերադասեի էջմիածինը, քանի որ ավելի խաղաղ աշխատանք և խաղաղ վայր է, ժամանակ և հնարավորություն կունենամ իմ գրական աշխատանքները շարունակելու: Իմ գործը կլինեի միայն Ձեր հետ, մինչդեռ Երևանի պաշտոնը բավական պատասխանատու, մեծ եռանդ և մեծ ժամանակ, նաև վարչական ընդունակություն պահանջող գործ է: Ես այդպես էլ գրեցի նրանց, բայց չմերժեցի: Մնում է, որ պաշտոնների հետ տեղնուտեղը ծանոթանալու համար ես մի շաբաթով զամ Երևան—էջմիածին և

ա՛յդ՝ ոչ ուշ քան ամսի 20—22-ը: Ուրեմն այդտեղ կխոսենք ու կորոշվի իմ «այո»-ն կամ «ոչ»-ը:

Ընկեր Տարագրոսին բարևներս հաղորդելով՝ խնդրում եմ հայտնեք, որ Տրդատ Ղազանճյանը Թիֆլիսից բացակա է, Մոսկվայումն է. ես կտեսնեմ <1 անընթ. > և, եթե հնարավոր եղավ, կբերեմ ինչ որ տվին: Այս վերջին Լրկու շաբաթը շատ դժաշված լինելով <2 անընթ. > դեռևս ժամանակ չեմ ունեցել գնալ նրանց մոտ:

Հարգանքի ողջուններով
Գաբեգին Լևոնյան

Բղթ. 239, վավ. 201^ա

3

21 հունվարի, 1924

Տփղիս

Մեծահարգո
ընկ. Սենեքերիմ.

Տփղիսի համալսարանի ձեռներեցությամբ մտադրություն կա մոտիկ ապագայում (գուցեև փետրվար ամսին) առաքել Հայաստան հատուկ էքսպեդիցիա, որի նպատակն է լինելու.

ա. ուսումնասիրել հայ-վրացական փոխհարաբերությանց վերաբերյալ մեր հին գրականության մեջ եղած և ցարդ չհրատարակված երկերը (որ ես եմ կատարելու).

բ. ուսումնասիրել այդտեղի ձեռագրաց հավաքածուների մեջ եղած վրացերեն պատառիկները և պալիմպսեստ կոչվածները (պրոֆ. Ակակի Շանիձե).

գ. հետախուզել վրացական ճարտարապետության նշմարները առնչությամբ հայկականների հետ (պրոֆ. Գ. Չուքինով).

դ. գրի առնել և ստուգել Հայաստանում եղած վրացերեն արձանագրություններն, նմանապես և վրաց տիրապետության շրջանի հայերեն արձանագրությունները (ես և պրոֆ. Շանիձեն):

Մեզ հետ լինելու է հատուկ ճարտարապետ և լուսանկար<իչ>:

Նախքան վրաստանի լուսժողովումը այս առիթով սկսե իր բանակցությունը Հայաստանի լուսժողովմի հետ և առհասարակ պաշտոնական ընթացք տրրվի մեր ուղևորությանը, խնդրում եմ Ձեզ տեղեկացնեք՝ ի՞նչ դրությամբ մեջ է Մոսկվայից վերադարձրած էջմիածնի մատենադարանը, արդյոք կարելի՞ է օգտվել ձեռագիրներով, ի՞նչ պայմաններում, ի՞նչ դուրություններ են տրվում մասնագետներին այդպիսի աշխատություններ կատարելու համար (ամբողջ օր, թե միմիայն որոշ ժամերին) ևլն:

Հարգանք Լ. Մելիքսեթ-Յեկ

Московская 3, ср. этаж

Բղթ. 239, վավ. 201^ա

4

23 հուլիսի, 1924

<Երևան>

Սիրելի Սենեքերիմ

Տառերի գյուտի և տպագրության հոբելյանի առթիվ 1912—1913 թթ. կազմրված հանձնաժողովի գործերում պահվում է պրոֆ. Մելիքի¹ մի նամակը Մ. Աբեղյանի² ուղղագրական ծրագրի առթիվ: Խնդրում եմ շուտ գտնես այդ գործը և ժամանակավոր կերպով հանես և ուղարկես ինձ այդ նամակը:

Քո Սշառ Հովհաննիսյան

Բղթ. 239, վավ. 201^ե

Արգո քաղաքացի
Դր. Սեմեֆերով Տեր-Հակովբյանին
վարիչ էջմիածնի մատենադարանի և թանգարանի.

Ստանալով Ձեր № 197 20 դեկտեմբերի < հմբերի > 25 գրությունը, որ գերման արևելագիտական հրատարակությանը պատվիրման կվերաբերի և 15 դոլլար, իմ խորին շնորհակալությունս կհայտնեմ թե հ. Գարեգինին¹ և թե Ձեզ, որ շեք կասկածած, որ ես միշտ ալ և ամենայն սիրով պատրաստ պիտի ըլլամ ըստ իմ ուժերու սատարելու մեր գիտական հիմնարկներուն, և ես ինքը զինքս երախտապարտ պիտի նկատեմ բոլոր մեր այն հաստատություններուն, որ ապագա տարագրչալիս առիթ պիտի տան իմովսանն բերել հայրենիքի ընդհանուր վերաշինության գործին, որը ներքին անուն սփռմամբ ես միշտ հրատարակել եմ տված դր. Լեպսիուսի² հրատարակած և իմ մոտիկ աշխատակցությամբ լույս տեսնող «Der Orient» ամսագրի մեջ: Մամուլի տակ գտնվող փետրվարի համարի մեջ թույլ եմ տված զիս քաղվածաբար տալու նաև Ձեր նամակներուն մեջ պարունակած տեղեկությունները մեր գիտական հիմնարկներուն բարգավաճման մասին: Այս առթիվ հայտնեցով իմ հատուկ շնորհակալությունս, հուսամ թե վերոհիշյալ տեղեկություններուն հրատարակման ընդդեմ չպիտի լինիք:

Գալով պատվերներուն, նախ և առաջ ըսեմ, որ թեպետ 15 դոլլարին ազդը ես հունվար 8-ին ստացած էի, սակայն Ձեր նամակները, որով ինձ համար պարզվեցան թե դրամը ուրկե և ինչ նպատակով կուգա, հունվարի 14-ին միայն ստացա: Անմիջապես պատվիրված են Ձեր ցանկացած 1) Lucian Scherman-ի Orientalische Bibliographie-ն, 2) Byzantinische Zeitschrift, 3) Zentralblatt für Bibliothekswesen—նոր իմ կողմանե՝ Caucasia—herausg. Adolf Dirr, Armenica-herausg. Karl Roth.

Պիտի առաջարկելի նաև եթե միջոցները ներեն.

1) Zeitschrift für Indologie und Iranistik.

2) " " Assyriologie. Վերջինս նշանակելի չափով կզբաղվի նաև հեթեթական հարցով:

Առանձին, ոչ պարբերական հրատարակություններն անշուշտ պիտի ցանկաք ունենալ Lehmann-Haupt-ի Armenien einst und jetzt, 2 հատորը, որ մամուլի տակ պիտի ըլլա. ավելին ապագային:

«Der Orient» ամսագրին հունվար-փետրվար 2 համարները կստանաք այժմ, իսկ եթե հին կոլլեկտիսներ ցանկաք՝ խնդրեմ հայտնեք: Մոտիկ ապագային կաշխատեմ առաջարկելիք հրատարակությանը ավելի ընդարձակ ցուցակ ներկայացնել Ձեզի:

Քզթ. 239, վավ. 231¹¹

Խորին հարգանք
Մ. Քրիշչյան

Սիրելի բարեկամ,

Առանց իմանալու, որ համալսարանը բերել է տվել նոր հայագետ Herbert Petersson-ի «Arische und Armenische Studien» գիրքը (տպ. Leipzig, 1920. գինը 10 մարկ=5 ռուբլի), երկրորդ անգամ իբր ինձ համար բերել եմ տվել: Թերթերը դեռ չկտրտած ուզում < էի > հետ ուղարկել գրավաճառին.

գուցե մի բան պակասով վերցնի: Բայց ուղարկելուց առաջ պարտք համարեցի հարցնել Ձեզ, թե արդյոք էջմիածնի գրադարանը չի՞ ուզում վերցնել նույն գիրքը. ճանապարհածախսը կվերցնեմ իմ վրա և զնից էլ մի զեղչ կանեմ: Պատասխանը՝ այո կամ ոչ, խնդրեմ մի բացիկով ուղարկեք ինձ, հենց այսօր կամ վաղը, որովհետև նրկուշաբթի օրը մեկնում եմ Բաքու: Նախքան մեկնելս ուղում եմ գիրքը հետ ուղարկել, եթե Ձեզանից բացասական պատասխան ստանամ:

Ներսիակ ուղարկում եմ Վենետիկից մի հայտ, խնդրում եմ կարգադրել: Բառարանս¹ տպվեց 56 երես. առաջին պրակի նյութը մինչև 100 էջ արդեն իբր պաշար թողնում եմ: Երբեմն պետք է լինում արարերեն բառարանի, ուստի խնդրելու եմ Ձեզանից Գամուսի 3 հատոր արարերեն բառարանը տրամադրության տակ զնել: Երբ մի որևէ ծանր բան փոխադրել հարկ լինի, խնդրեմ, Գամուսն էլ մի՛ մոռանաք ուղարկել Երևան. առայժմ կարելի է թողնել Հանրային գրադարանը. վերադարձիս կստանամ:

Ձերդ հարգ.
Հ. Անադյան

Քղթ. 239, վավ. 231 IV

7

10 հունվարի, 1927
Երևան

Շատ սիրելի Սենեքերիմ.

Պաղտասար դպրի մասին, որպես քերական, բանաստեղծ և երաժիշտ, մի ուսումնասիրական հոդված եմ գրում¹. խնդրում եմ քեզ մատենադարանում նայես, թե ունի՞ք նրա

1. Համառոտ քերականութ<յուն> աշխարհաբար լեզվի 1760 թ. (1736-ին տպագրված երկհատոր քերականութ<յուն>ն յունկմ).

2. Շահավետ 1750 թ.

3. Ցանկագիրք 1753 թ.

Բացի այս, Ձեռագրատանը կա Պաղտասարի տաղաբանը թիվ 604, որից օգտվել է Չոպանյանը². շատ եմ խնդրում կարճ ժամանակով թե ձեռագիրք և թե տպագրված գրքերից (իմ թվածներից) ինչ որ ունիք, մի ապահով մարդու հետ ուղարկես: Թող բերեն գիտական ինստիտուտ կամ Հ<այաստանի> Հնություն<ների> պահպ<անման> կոմիտե:

Շատ բարեներով
Գ. Լեոնյան

Քղթ. 239, վավ. 244 IV

8

12 հունվարի, 1927
Երևան

Սիրելի Սենեքերիմ.

Ինչո՞ւ մինչև այժմ չպատասխանեցիր Թորամանյանի¹ և Գարեգին² եպիս-վոպոսի նեգատիվների մասին, խնդրում եմ շուտով պատասխանեք:

Ես Լանսերին նկարել եմ տալու 10 նկար՝ ցանկանալով լրացնել հայ տարազների ժողովածուն. խնդրում եմ հայտնես, թե Քո կարծիքով էլի ինչ տարազներ պետք է նկարել տալ. գուցե թանգարանիդ տարազների մեջ կան այնպիսիք, որ արժեն նկարել: Բարևս հարգ. տիկնոջը:

Քո Ե. Լալայան

<Հ. Գ.> խնդրում եմ վերադարձնես «Հայ-Տարազը»:

Քղթ. 239, վավ. 244 V

Հարգելի բարեկամ. ընկ. Սենեֆերիմ.

Մենք Ձեզ հետ մայիսի 18-ին պայմանավորվեցինք, որ հաջորդ օրը, 19-ին, իրար հանդիպենք պատմության և գրականության ինստիտուտում, ժամի 12-ին: Նշանակված օրը, երբ դալիս էի ինստիտուտ՝ տրամվայից իջնելիս ձախ ոտս կոտրեցի՝ աճուկիս մոտ: Ինձ տարան հիվանդանոց, որտեղ մնացի մինչև օգոստոս 11-ը: Ոսկորս բարեբախտաբար կպավ—որ բժիշկները չէին սպասում, և ես արդեն կարողանում եմ <1 անընթ. > օգնությամբ քայլել անել: Այս դրությամբ օգոստոսի 11-ին, կնոջս և աղջկանս ուղեկցությամբ և օգնությամբ, Երևանից մեկնեցի ու հաջորդ օրը ապահով հասա Քիֆլիս՝ մեր բնակարանը: Ոտքիս մկանունքները, որոնք 45 օր գիպսի մեջ անշարժ մնալով ընդարմացել-փետացել էին՝ կամաց-կամաց սկսեցին նախկին շարժունությունն ստանալ, և ներկայումս ես, ձեռքի գավազանով, կաղեկաղ մասն եմ գալիս տանը, բոլոր պետքերս ինքս հօգում առանց ուրիշի օգնության, և, որ գլխավորն է, աշխուղանում եմ աշխատել իբրև կատարելապես առողջ մարդ: Օգոստոսի 26-ից ձեռնարկեցի Սեբեոսի խմբագրության. արդեն պատրաստել-վերջացրել եմ բնագիրը յուր բաղդատություններով և ժանոթություններով: Այժմ ձեռնարկել եմ առաջաբանը գրելու, որի մեջ խոսք պիտի լինի անշուշտ ձեռագիրների մասին: Այստեղ մի դժվարության առաջ եմ կանգնած, որի լուծումը Ձեզանից եմ սպասում:

Սեբեոսի № 611 կամ այժմյան № 2639 ձեռագիրը բաղդատելիս՝ արտագրեցի վերջում դրված Գրիգոր երեցի հիշատակարանը. «Ձյտինս ի գրչաց» և մինչև «յիշեալ լինիցի ի Քէ յարդարամետ դատավորին մերմե 3է Քէ նմա փառք յաւիտեանս ամենա: (Առանց թվականի): Այնինչ Միաբանի՝ հոգվածում («Արարատ», 1891, եր. 154) այս նույն հիշատակարանի վերջում կա. «Արգ գրեցաւ սա ի թվին ՌՃԻԱ ի Բաղէշ՝ ի վանս Հովհաննու Կարապետի»:

Արդյո՞ք ես եմ անտես արել իմ արտագրության մեջ այս վերջին հավելվածը, թե՞ Միաբանի բերած հիշատակարանը՝ թվականով հանդերձ՝ գտնվում է Սեբեոսի պատմությունից դուրս ուրիշ տեղում (օրինակ՝ Կորյունի վերջում կամ Ղազար Փարպեցու պատմության կամ Թղթի վերջում <)>: Ուրեմն առաջին խնդիրս է՝ այս տարակույսս լուծել:

Երկրորդ խնդիրս է—Կարենյան ցուցակի² № 2340 մագաղաթյա ձեռագրում կտրված թղթերի հետքեղ կա՞ն, թե ոչ: Խնդրում եմ ստուգել: Ինչպես գիտե՞ք. Բ՝ Միհրդատյանը էջմիածնի մի մագաղաթյա ձեռագրից կտրած է հղել երեք թուղթ (Ստեփանոս Տարոնացու ժամանակագրությունից) և հետը տարած Կ. Պոլիս: Գևորգ Գ. կաթողիկոսը նրանից ետ է վերցրել, նորից բերել էջմիածին և պահելիս են հղել վեհարանում, բայց վերջը հանձնվել է մատենադարանին (և այժմ, ողբան գիտեմ՝ անհայտ է մնում): Գուցե, կարծում եմ, հիշյալ № 2340 ձեռագրից, որ ժամանակագրություն է պարունակում, կտրված լինեն այդ երեք թուղթը:

Հնդունեցեք հարգալից բարեններս:

Ձեր Ստ. Մալխասյան

Тбилиси, площ. Бебея № 10
Քղթ. 239, վավ. 244^{XII}

10

<21 հունվարի, 1928*
Երևան>

Ընկ. Սենեֆերիմ!

Այս շաբաթ, Ժ. 12-ին, լինելու է իմ զեկուցումը Նոր Բայազետի բեհու-

* Տարեթիվը վերցրել ենք ծրարի վրայից:

գրի մասին. խնդրում եմ ներկայությամբդ պատվել այդ իմ անդրանիկ «բեկեռագիտական» ելույթը, մանավանդ որ բացի Աշխարհբեկից¹ ուրիշ ձեռնհասը այստեղ չկա պրպտումներս հասկանալու և գնահատելու: Ուղարկածդ 8 կտոր (տող) սրձանագրությունը 1881 թվին Մոլլաբայազետում գտնված Սարգուրի արձևանագրությունն՝ Վերջին մասերն են՝ ualniše (V տող), šip-rugini (VI տ.), UT-nikai (:Ardini kai, VII տ.), šuyaidi (VIII տ.): Նորագույն սեպագիրը Ջանֆիդայի ունի մի կտրուկ բառ (SU.NI), որը գործ է ածվում խեթական բնագրերում «ատրուշան, կրակարան» իմաստով: Եթե գալու ես զեկուցմանս, խնդրում եմ հետդ բերես «Արարատ 1910 թ.» ուր կան Բասենի և Ալաշկերտի 2 արձանագրությունները (էջք 188—191 և էջ 576):

Հարգանքդ՝ Գր. Ղափանցյան

Թղթ. 239, վավ. 250 VII

11

27 ապր<իլի>, 1930

ն<որ> նախիչևան

էջմիածնի մատենադարանի վարիչ
Ս. Տեր-Հակոբյանին

Մայիսին լենինգրադում ակադեմիկ Մառի¹ և պրոֆ. Օրբելու² ղեկավարությամբ Անիի պեղումների հետ կապված՝ հայ արվեստի և կուլտուրայի մշակութային ցուցահանդես պիտի կազմվի: Մարտի կեսերին այնտեղ էի, մի զեկուցում արի, ինչպես և անցյալ տարի, հայ արվեստի որոշ խնդիրների մասին, և ապա հրավեր ստացա մասնակցել հայ արվեստին վերաբերյալ նյութերով ցուցահանդեսին: Հավանորեն ակադեմիան հանձն կառնի մանրանրկարչականի հետ և հիշատակարանների ժողովածուի սպագրությունը:

Այսու խնդրում եմ լուսժողկոմատից իրավունք ստանաք հայ ժողովրդական տարազին և արվեստին վերաբերյալ տախտակների առաջման համար, որի համար դիմում եմ և լուսժողկոմատին: Հիշում եք, որ այդ ժողովածուն հարկավոր դեպքում իմ տրամագրության տակ պիտի դրվի գիտական նպատակների համար մեր պայմանների համեմատ, որ ստորագրել ենք հանգուցյալ Մոսկվայի³ հետ: Լավագույն առիթն <է> մեր միասին կազմած այդ ժողովածուն գիտության առաջ դնելու, հայ ժողովրդական զարդարանքի մասին գաղափար տալու, հավանորեն և սպագրությունը հաջողեցնելու: Խնդրեմ, շտապեք ուղարկելու իրավունքի ձեկանությունները անմիջապես կատարեք, որպեսզի, երբ հեռագրեմ Ձեզ, ամբողջ ժողովածուն, Աղթամարի տախտակների հետ ուղարկել կարողանաք նյութական կուլտուրայի պատմ<ություն> ակադեմիայի նախագահ Նիկոլայ Յակովլևիչ Մառի հասցեով:

Գաբգին արքեպիսկոպոս
Հովսեփյան

Իմ հասցեն՝ Нахичеван н/Д, 16л. № 12.

Մառի հասցեն՝ Ленинград, Президенту Академии по истории матер. культуры академику Н. Марру. Мраморный Дворец.

Թղթ. 239, վավ. 265 II

12

23 հունիսի, 1932

Երևան

Արզո եղբայր Սենեքերիմ

Իմացա, որ արխիվումդ գտնվել են հանգուցյալ Խաչատուր Աբովյանի նամակները, գրված Աբիխին¹ (չորս հատ):

հնդրում եմ, եթե իմ այդ լսածը ճիշտ է, նեղություն հանձն առնիս, ուղարկել այդ նամակները «Կուլտուր-պատմական թանգարանիս» գրական սեկտորի վարիչ ընկեր հորեն Սարգսյանին²։ Ես կօգտվեմ դրանցից իմ «Արուսյանի աղբյուր» աշխատանքիս³ համար ու կվերադարձնեմ անկորուստ Ձեզ։ Ընդունիր հարգանքս հավաստիքը։

Ե. Շանգարի

Թղթ. 239, վավ. 273

13

9 փետրվարի, 1935

Փարիզ, 9 Rue Say

Սիրելի ընկեր Սենեֆերիմ Տեր-Հակոբյան,

Ձեզի արդեն գրած եմ ստացած ըլլալս Աղեփսանդրու վարքի լուսանկարները և «Սաղաղա» աշուղի <1 անընթ>։ Երևանին օրինակութունը։ Շատ լավ եք ըրել այս վերջինը հրատարակելով Գրական քերթիս մեջ, և ինչպե՞ս սիրուն էին Կոչոյանի գծած նկարները¹։ Մեր Ապագան² խոսք ու նկար արտապեսցի իր կիրակնօրյա թիվին մեջ։ Ես այս միջոցին շատ զբաղած եմ, բայց երբ ֆրանսերեն թարգմանեմ և տեղ մը հրատարակեմ, օրինակ մը կղրկեմ ձեզի։

Հրաչ Երվանդը³ ինծի հանձնեց Եղնիկի ձեռագրի ֆիլմը։ Այդ մեծ հաճույք պատճառեց ինծի։ Իսկույն գրեցի Հ. Մարիեսին⁴, որ փոսթաց գալ անձամբ ստանալ ինձմե՞ս այդ անգին տոթումենտ<ները> իր աշխատանքի համար ամենակարևոր։ Իր ուրախությունը շատ մեծ եղավ։ Ձեզի արդեն գրած պետք է ըլլա։

Աղեփսանդրու վարքի մյուս պատկերներու (զոր նշանակած եմ) եթե քիչ շատ հաջող լուսանկար մը կարենաք զրկել մոտիկ ապագայի մը մեջ, ինչպես խոստացած եք, մեծապես շնորհակալ կլինեմ։ Իմ գործիս ձեռ արդեն իսկ բերած կարևոր օգնությունը լրացուցած կըլլաք։

Գալով ճեղքակյան տաղաշարքերու (խրատական ու մանավանդ սիրային), եթե ո՞ր ձեռագիրներուն մեջ ատոնցմե գտնվիլը նշանակած եք, Գեվորգ արքեպիսկոպոսը պատրաստ է, ինչպես կգրե ինծի, օրինակել ինծի համար այն շարքերը, զոր պարունակող ձեռագիրները ես չեմ տեսած։ Ես իրեն զրկած եմ ցուցակը բոլոր այն ձեռագիրներուն, որոնցմե (1909-ին և 1932-ին) օրինակած եմ «քուլակյան» տաղաշարքեր։ Ատոնցմե դուրս (պատերազմի առաջին եկած ձեռագիր տաղարաններուն և այլ ձեռագիրներուն մեջ<)> եթե կան իսկապես քուլակյան համարվելիք շարքեր, գո՛հ կըլլայի ատոնց ալ օրինակությունն ունենալով։ Ինչ որ ունիմ հավաքած, ահագին զանգված մըն է, որու չափ ճոխ հավաքածու ոչ ոք ունի, բայց եթե հոս դեռ կան լրացուցիչ մասեր, ինչո՞ւ անոնք ալ չունենամ։

Սիրալիք բարևներով
Ձեր Ա. Զոպանյան

Թղթ. 239, վավ. 318^{II}

14

10 հուլիսի, 1935

Փարիզ

Մեծարգո քաղաքացի Սենեֆերիմ Տեր-Հակոբյան
Մատենադարանապետ Վաղարշապատի Պետ. Մատենադարանի
էջմիածին

Մեծարգո բարեկամ,

Ձեր 15 ապրիլ թվակիր նամակը ստացա միայն 7 հունիսին, և կցավիմ, որ ամառնային եղանակին պատճառով ավելցած զբաղումներս թույլ չտվին ավելի շուտ պատասխանել։ Այսուհանդերձ, ձեզի գրելի առաջ, ձեր հասցեին

դրկել տվի Արտավազդ արքայիսկ<ոպոս> Սյուրմեյանի՝ հրատարակած երկու տետրակները, զորս կհուսամ, թե ստացած եք ուղղակի Հալեպեն (Սուրիա)։ Հեթում պատմիչի ժամանակագրությունը անշուշտ անծանոթ գործ մը չէ։ Վերջերս Արտավազդ արք<եպիսկոպոսը> Հալեպի ձեռագրի մը մեջ գտած և հրատարակած ըլլալով անոր ավելի ամբողջական մեկ օրինակը, քան Վենետիկի մեջ հրատարակվածը, ձեռնարկած էի անոր ֆրանսերեն թարգմանության, թեև Տյուկորի⁶² ժամանակին հրատարակած է ֆրանսերեն թարգմանությունը ԻՍՅՈՐԻԷՆ ՏԷ ՔՐՈՒԱԶԱՏԻ հայ պատմագիրներու շարքին առաջին հատորին մեջ։ Ձեր նամակը ընդհատել տվալ այս աշխատությունը, և ուրախ եմ, որ էջմիածնի Մատենադարանին մեջ ավելի կատարյալ օրինակ մը գոյություն ունի։ Ներփակ ձեզի կղրկեմ Հալեպի օրինակին լուսանկարը, զոր բերել տված էի, իրավամբ չվստահելով Արտավազդ արք<եպիսկոպոս>ի հրատարակության։ Իր հրատարակածին և լուսանկարին միջև երբեմն կարևոր տարբերություններ կան, և մանավանդ երկու տեղ տպագիրը դուրս ձգած է երկու հատված, ընդօրինակողին անուշադրությամբ։ Այս լուսանկարներուն համար վրձարած եմ 180 ֆրանկ, որ ձեր հաշվին կանցընեմ առաջիկային դիրքի փոխանակությամբ հաշվակցելու համար։ Կհուսամ, որ այս առաքումը գոհ կթ<ո>-ղու ձեզ։—Ջարմանալի է, որ Ֆինքի հոգվածը բոլորովին մոռցած էի։ Թեև Հայագիտական հանդեսը⁶³ ունի մ ժամանակին աչքե ալ անցուցած եմ։ Ձեմ գիտեի, թե ձեր օրինակը որքա՞ն ավելի կատարյալ է, և թե մտադի՞ր եք ծանոթագրություններ ավելցնել կամ պարզապես բնագիրը հրատարակել։ Այս մասին եթե հաճիք տեղեկություն տալ՝ շնորհակալ կըլլամ։

Եզնիկի ձեռագրին լուսանկարման համար ես որևէ դիմում չըրի Բ. Մարիեսին⁶⁴։ Քանի որ ձեր ղրկածը միայն ֆիլմ է, կարծեմ պատշաճ չըլլար ֆիլմին գինեն ավելի բան մը պահանջել։ Նախապես քլիշեի վրա էր հարցը։ Ասկե դատ, ձեր Մատենադարանին համար կհուսամ թե Բ. Մարիես սիրով կնվիրե իր զանազան հրատարակությունները։

Կխնդրեմ Եզնիկի հատվածին լուսանկարն ալ ղրկել, իմ հասցեիս։ Շնորհակալ կըլլամ, եթե ղրկել տաք Կոպտ-պատմության ինստիտուտի տեղեկագիրը, երբ լույս տեսնի։

Վայցմանի գիրքը հայ մանրանկարչության մասին⁶⁵, քանի մը օրեն կրստանաք ուղղակի Դերմանիային։ Բայց, եթե կարելի է, Սայտելի⁶⁶ Մխիթար Հերացիի թարգմանության ճիշտ անունը և հրատարակիչը իմացուցեք ինձի։ Այդ գործը շատ ավելի սուղ կարժե, քան Վայցմանը, և այս միջոցիս ի վիճակի չեմ անմիջապես ուղարկելու։

Առաջիկային ուղարկել կուտամ նաև Ասորագիտական համայնագիտական պրակնները։ Խնդրեմ ըսեիք, թե մինչև ո՞ր պրակը ստացած եք։

Խնդրեմ առայժմ ղրկեցեք ինձի հետևյալ գիրքերը։—

Աբեղյան. Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու «Հայոց

Պատմության» մեջ։

Կանայան Ստեփան. Անհայտ գավառնեղ հին Հայաստանում։

Կոստանյան. Հայոց հեթանոսական կրոնը։

Մանանդյան. Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ։

Մանանդյան և Աճառյան Հայոց նոր վկաները։

Մեսրոպ վարդ. էջմիածին և Հայոց հնագույն եկեղեցիները։

Շահաթունյանց. Ստորագրություն Կաթողիկե էջմիածնի, ևն։

Տեր-Մինասյան. Հայոց եկեղեցուն հարաբերությունները ասորի եկեղեցու հետ։

«ԱՐԱՐԱՏ» թիվերը կիմացնեմ հաջորդ անգամ։

Սպասելով ձեր պատասխանին և մանավանդ լուսանկարներուն ստացման լուրին, կխնդրեմ ընդունիլ անկեղծ հալոգանքներս։

Հ. Պեռպեյան

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Նկատի ունի երաժիշտ-բանահավաք, երաժշտագետ, երգիչ, խմբավար և մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասին (Սողոմոն Սողոմոնյան. 1869—1935):

2

1. Խոսքը մանրանկարիչ, քանդակագործ, մանկավարժ Տարազրոս Տեր-Վարդանյանի (1878—1953) մասին է:

4

1. Նկատի ունի Անաուան Մեյիին (1866—1936):
2. Խոսքը Մանուկ Աբեղյանի (1865—1944) մասին է:

5

1. Նկատի ունի նշանավոր հայագետ, բանասեր, արվեստի պատմաբան, հոգևոր գործիչ Դարեգին Հովսեփյանին (1867—1952):

2. Զոհաննես Լեփսիուս (1858—1926)—գերմանացի հոգևորական, հասարակական գործիչ, արեւելագետ, նրկար տարիներ զբաղվել է Հայկական հարցով: Գրել է «Հայաստանը և Էվրոպան» (1896), «Տեղեկագիր հայ ժողովրդի կացության մասին Քուրքիայում» (1916) ուսումնասիրությունները, կազմել և հրատարակել է «Գերմանիան և Հայաստանը 1914—1918 թթ.» (1919) փաստաթղթերի ժողովածուն (գերմաներեն), 1914—1926 թթ. եղել է իր հիմնած «Գերմանա-Հայկական ընկերության» նախագահը:

6

1. Նկատի ունի «Հայերեն արմատական բառարանը»:

7

1. Գարեգին Լևոնյանի «Պաղտասար դպիր քերական, բանաստեղծ և երաժիշտ 18-րդ դարում» վերնագրով հոդվածը տպագրվել է Գիտության և արվեստի ինստիտուտի «Տեղեկագրում» (1927, յժ 2, էջ 114—131):

2. Խոսքը Արշակ Չոպանյանի (1872—1954) «Հայ էջեր. մեր նախնայաց բանաստեղծությունն ու արվեստը (հիսուններկու պատկեր)» (Փարիզ, 1912) գրքի մասին է, ուր զետեղված են Պաղտասար դպրի 14 տաղը:

8

1. Նկատի ունի Հարտարապետ Թորոս Թորամանյանին (1864—1934):
2. Տե՛ս նամակ 5-ի 1-ին ծանոթ:

9

1. Նկատի ունի հայագետ, բանասեր, հոգևոր գործիչ Գալուստ Տեր-Մկրտչյանին (Միաբան. 1860—1918):

2. Խոսքը Հակոբ Կարենյանի «Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի սրբո աթոռոյն էջմիածնի» (Թիֆլիս, 1863) գրքի մասին է:

10

1. Նկատի ունի Աշխարհբեկ Քալանթարին (1837—1938):

11

1. Խոսքը Նիկողայոս Մառի (1864—1934) մասին է:
2. Նկատի ունի Հովսեփ Օրբելուն (1887—1961):
3. Ասրանազ Մոսվյան (1885/1886—1929)—պրոֆեսորական, պետական դործիչ, ՀՍՍՀ լուսժողկոմ և Ժողկոմիոբրի նախագահի տեղակալ:

12

1. Հերման Աբիխ (1806—1886)—ուկրաինական, Հուլիական լեոնաշխարհի երկարամյա հետազոտող: Ապրել է Անդրկովկասում և հանգամանորեն հետազոտել Պատմական Հայաստանի տրեհյւան և արեմոյտն բնաշխարհի ընդերքի հարստութիւնները և երկրաբանական ու աշխարհագրական յուրահատկութիւնները: Իրենց գիտական արժեքը պահպանում են նրա «Հայկական լեոնաշխարհի երկրաբանութիւնը» եռահատոր աշխատութիւնը և «Անդրկովկասյան երկրներին» նամակների շարքը: Խ. Աբովյանի հետ Աբիխը 1844 թ. հինգ ամիս ճամփորդել է Արեւելյան Հայաստանում, Պարսկաստանում և Թուրքիայում, ապա բարձրացել Փոքր Մասիսի գագաթը, իսկ Մեծ Մասիսի գագաթը բարձրանալու փորձերը ձախողվել են:
2. Խորեն Սարգսյան (1891—1970)—գրականագետ-քննադատ:
3. Նկատի ունի Դիմիտր Խաչատուր Աբովյանի» ժողովածուն, որ լույս է տեսել 1940 թ.:

13

1. Խոսքը «Բանք երկու եղբորն, որ ի Մար քաղաք են եղեր Պօնցի Սաղաղայի ասացեալն» տաղի մասին է, որի խորագիրը պատկերագրել էր Հակոբ Կոչոյանը («Գրական թերթ», 10. XII. 1934):
2. «Ապագա»—քաղաքական և հասարակական շտաբայթերի (առաջ՝ եօրայ): Հրատարակվել է Փարիզում՝ 1921—1936 և 1945—1950 թվականներին:
3. Հրաչ Երվանդ (Նշան Յաղուպյան. 1885—1968)—իրավաբուն, հրապարակագիր-խմբագիր «Ջայն Հայրենյացի» (Նյու Յորք), «Պահակ» (Բոստոն), «Ժողովրդի ձայն» (Փարիզ) և «Պայքարի» (Բոստոն):
4. Նկատի ունի Ֆրանսիացի հայագետ, բանասեր Լուի Մարիեսին (1876—1958): Նա 1934 թ. եղել է Վենետիկի Միսթարյան միաբանութիւն ճեմարանի անդամ, 1926-ին Փարիզի Կաթոլիկական ինստիտուտում բացել է դասական հայերենի ամբիոն, միաժամանակ 1928 թ. դասախոսել է Արեւելյան կենդանի լեզուների աղգային դպրոցում: 1928 թ. հրատարակել է «Ուսումնասիրութիւն Նքինի մոտ գոյութիւն ցույց տվող մի քանի անունների և բայերի մասին» աշխատութիւնը, Բարձմանի և Ժանոթագրել է Նքինի Կողբացու «Նդժ աղանդոց», որը 1960 թ. հրատարակել է Շ. Մերսիեն: Գրել է հայագիտական մի շարք այլ ուսումնասիրութիւններ ու հոգւածներ:

14

1. Նկատի ունի բանասեր, պատմաբան, սիրիահայ թեմի, Հալեպի շրջանի առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյանին:
2. Էդուարդ Դյուլորիե (1807—1881)—ֆրանսիացի հայագետ: Զբաղվել է հայ մատենագիտների երկերի ուսումնասիրութիւնը ու Բարձմանութիւնը, հրատարակել է հայոց պատմութիւնը վերաբերող աշխատանքներ:
3. Խոսքը անվանի հայագետների Ա. Մելիքի և Յ. Մակլերի 1920 թ. հիմնած «Revue des Etudes Arméniennes» հանգեսի մասին է: Հայագիտական այս հանդեսը դադարել է 1933-ին. նոր շարքով կրկին վերահրատարակվել է Փարիզում՝ 1964 թ.:
4. Տե՛ս նամակ 13-ի 4-րդ ծանոթ.:
5. Նկատի ունի Կ. Վայցմանի «Die armenische Buchmalerei des 10 und beginnenden 11. Jahrhunderts» (Jstanbuler Forschungen, 4, Bamberg, 1933) աշխատանքը:
6. Խոսքը գերմանացի բժիշկ, Բարձմանի էռնեստ Զեյդլի (1850—1922) մասին է: Հայերենից Բարձմանի է Միսթար Հերացու «Ջերմանց միսթարութիւն» աշխատութիւնը («Mechitar's Meist'erasztes aus Her „Trost bei Flebern“, Lpz., 1908):